



ԲԱՐՁՐԱՎԱՐ

Է. ՏԱՐԻ. Թիկ 5.

1849

ՄԱՐՏԻ 4.

ԲԱՐՁՐԱՎԱՐ

ԱԶԳԱՑԻ ԴԱՍՏԱԿՈՒԹԻՒՆ

Աշխատանքի համար էլեկտրական գլուխացնելու համար :

Արուճետամին մարդու պարտքն է իր ազգը սիրել, պաշտպանել, հոգալ, և աս պարտքս առանց ձանաչողութեան չըլլար կամ լաւ ըլլար, պէտք է արդարութեամբ ձանձնանք մենք ալ մեր ազգին չափն . սրբենք մոտաց աջուրնիս, որ չըլլայ թէ տգիտութեամբ և վատութեամբ մթընցած՝ չտեսնէ անոր գեղեցիկ ձիթքերն ալ, կամ չըլլայ որ շացութեամբ՝ որ է չափազանց տեսութիւն՝ տեսածներնուս կերպարանքն այլայլ և սեն ալ ձերմակ տեսնենք :

Եթե երկու տեսակ նայողներն ալ կրնան գտնուիլ ազգերնուս մէջ. ոմանք չայու ազգը ցած, անարդ, սինկըոր, կոշտ, սե բան մը կը սեպեն. ոմանք ալ տեսակ մը հպարտ և յամառ ազգասիրու-

թեամբ չեն ուզեր որ մէկ կերպով մը ազգին դպչուի, ազգին վրայ արատ մը դրուի . իբրև թէ ազգը սիրելը անոր պակսութիւններն ալ պաշտել ըսել է,

մէկն ազգը պաշտպանենք ըսելով անոր պակսութիւններն ալ կը պաշտպանեն առանց իմանալու կամ իմանալով :

Վզգին պակսութիւնը պարտըկել՝ խելացութիւն է, բայց պակսութիւնը չանձնալ մեծ անխելքութիւն :

Վզգը միշտ վար զարնել, անդադար պակսութիւններն յիշել, ողբալ, արհամարհել ասոնք մարդուն սիրու կը կոտրեն, թուլացընեն, յուսահատեցընեն, կատղեցընեն . միշտ գովելն և գովիլի ցուցընեն ալ սիրու կ'ուռեցընեն, միտքը կուրացընեն, մնապարծ ազգասիրու

կ'ընեն , օդու մէջ պարող մը՝ որ հաստատութիւն չունի , ու խելացին փուֆ մը ըսէ՝ վար կ'իյնայ :

Դզգ մը արթընցընելու վեր վերցընելու ատին՝ իրաւ է որ առջի բերան սիրտ տալու , յուսոյ և գովութեան ձայներ պէտք է տալ , ինչպէս որ եղաւ ալ մեր ազգին , և մենք ալ երբեմն աս ձայներս տուինք , և մեծ միսիթ արութեամբ իմացանք որ ազգերնուս մէջ կենդանութիւն կայ , վասն զի գովեստ լսելը և ուրախանան և քիչ մը պարծին ալնշան է սրտին կենդանութեանը . թէ որ աս նշանս ըըլլար՝ պէտք էր յուսահատիլ մեր ազգէն : Շայց որովհետև գովելով միայն կըթութիւն ըըլլար , ինչպէս տղայ մը՝ անանկ ալ նոր կըրթուող ազգ մը պէտք է իմանայ իրեն տիրող պակսութիւնները որ ըստ այնմ զգուշանայ ու շտկէ զինքը . բոլոր ճարտարութիւնը հոս է թէ ինչ կերպով իմացընելու է : Շատ կը սիսալին անոնք որ ազգը կ'ուզեն շարժել յանդիմանող , կծու ձայնով , կը կարծեն թէ փոսը ընկած է մը կը վերցընեն հրելով մշտելով , կանչուրուտելով հայհոյելով , այս բանս շարժելու տեղ՝ աւելի կը ջլատէ կը կոտրէ ուժը , արդէն հիւանդ մարմինը աւելի կը վատուժցընէ : Այն պէս ասոր հակառակ չափազանց փայփայելն շողոքորթելն ալ կրնայ չարաչար դիրութիւն մը բերել հիւանդ սըրտին՝ որ նոյն պէս վնասակար է անոր : Ուրեմն չափաւոր գովեստ մը , մանաւանդ առջի բերան , կրնայ լսւ օծանելիք մը ըլլալ վիրաց՝ ոչ շատ ճզմելով ոչ շատ շյելով :

Հիմայ տեսնենք երկու հակառակ կարծեաց կամ նայուածքին պատճառներուն : Ինոնք որ ազգը իբրև կատարեալ կամ առաւելելէ կը ցուցընեն , կարծեմուրիշ մեծ պատճառ չունին , բայց եթէ իրենց և իրենցմէ առջիններուն կարծիքը , յամառ ազգասիրութեամբ մը , որ է տարածեալ ինքնահաւանութիւն մը , խոշոր ու յոզնակի եսութիւն մը . և ահա այս կարծիքն է , պէտք է հոս խոստովանինք , ազգերնուս զլիսա-

ւոր պակսութիւններէն մէկը , որ ուրիշ տեղ կը քննենք : Դզգասիրութիւնն շատ լսւ բան է , բայց Ճմարտութենէ դուրս չելլեն՝ ամենէն լաւն է , և ազգասիրութենէ ալ դուրս չէ . “ Դզգին „ վրայ փոշի մը չնստեցընել ուզելն՝ ազգ „ զըքարկոծելու վտանգի մէջ ձգել է „ , կ'ըսէ Խիկարը : ՈՒէ որ մենք Հայ ըլլանուս համար՝ Հայու ազգն զարմանալի կատարեալ , գեղեցիկ սովորութեամբք զարդարեալ պէտք է տեսնենք , ամէն ազգեր ալ պէտք է այնպէս տեսնեն իրենցը . իսկ թէ որ մենք գիտենք թէ անոնց մէջ պակսութիւններ կան , անոնցմէ իմանանք որ մեր մէջ ալ կան :

Ո՞րն են մեր պարծանաց աղբիւրներն . քաղաքական զօրութիւն , խելացի քաղաքավարութիւն , գիտութեանց զարգացմունք , երևելի գործոց համբաւու փառք : Դժբաղդաբար ասոնցմէ խիստ քիչը կը տեսնենք հիմայ : Իսկ թէ որ անցածներուն վրայ է պարծելիքնիս , պէտք է անցեալը ներկայէն զանազաննենք , ու ըսենք թէ Ունէինք՝ չէ թէ ունինք . ու երբոր յիշենք թէ մեր պապերուն քով կարասով լեցուն ստակ կար՝ յիշենք ալ որ մեր քսակը պարապ է . երբոր անոնց սամցրները յիշենք՝ նայինք թէ մեր ուսերն ալ կը տաքնան . երբոր անոնց վայլած դահամունքն և գուսանաց ձայներն յիշենք՝ նայինք թէ մեր փորն ու ականջն ալ կը կշտանայ : ՈՒէ որ ասոնք մեզի հիմայ օգուտ մը չունին , և ոչ ալ իրենց մեծութիւնը , հարատութիւնը , խելքը , գիտութիւնը , սրբութիւնը օգուտ մը կրնան բերել , ինչուան որ մենք ալ ջանք ընենք մեր քրտինքովը զանոնք վաստըկելու : Դրախտին Հայաստանի մէջ ծաղկիլը՝ զմեզ չկրնար ազատել հիմակուան փուշերէն որ լեցուն է ճամշընուս վրայ . տապանին իր նաւահանգիստը մեր Այրարատ լեռանը վրայ գտնելն՝ չէ կրցած զմեզ բարբարական չընել , թերեւս ամէն ազգէ ալ եւել . մեր աննման դիւցազունք և քայլերն և երևելի մարդիկը՝ չեն կրնար մեր գերութեան և խեղջութեան վիճակը

մեզի մոռցընել . մեր | ուսաւորչայ որ-
դիք ըլլալը՝ չկրնար մեր միտքը ըսերել՝
թէ հրեայք ալ | բրահմանու որդիք
էին . և թէ լոտուած ամէն ազգի ալ
մէկ լուսաւորիչ մը տուեր է , որ ջա-
նան անոր լոյսը առնելու և իրեն նմա-
նելու , չէ թէ անով պարծելու . ասանկ
պարծողաց համար կ'ըսէ լիիկարը , թէ
“ Ռերաննին լեցուն է բայց փորերնին
” միշտ պարապ , “ լախնիք այն ատեն
պարծանք են մեզի , երբ մենք ալ իրենց
նման կ'ըլլանք . ինչպէս որ մեզի նախա-
տինք ալ չեն ըլլար անոնք՝ թէ որ մենք
անոնցմէ լաւ ըլլանք . մեր ինչ ըլլալը՝
մեզնէ կախուած է . անոնց պարծանքն
ու փառքը՝ մէկ լոյս մըն է մեր ճամբուն
վրայ , բայց մենք պէտք է որ աչուրնիս
բանանք ու ոտուրնիս շարժենք , չէ նէ՝
“ Ոչ ճամբան գիտնալն կարաւանը իր
” իջևանին կը հացընէ , ոչ նաւահան
” գիտը ճանչնալն զնաւը կը մօտեցը-
նէ , կ'ըսէ լիիկարը :

Ծնէ որ մեր աստուածատուր բնական
ձիրքերն են մեր պարծանաց պատճառ ,
ասոնք իրաւ են , և շնորհակալ պէտք է
ըլլանք | լոտուծոյ՝ որ հայու ազգին
տուեր է շատ կարողութիւն , ուսկից
շատերը պակաս կ'երենան . բայց շնոր-
հակալ ըլլալու տեղ ըլլայ որ անխել-
քութեամբ հպարտանանք , և աւելի
ամօթալի ըլլանք . վասն զի բան ունե-
նալը պարծելի չէ հապա բանեցընելն
և օգտակար ընելը . “ | Ենք շատ զէն-
քեր ունինք , կ'ըսէր մէկը , սնտուկով
սուր ունինք , պատերնէս հրացաններ
կախուած են . — | յւ անշուշտ պատին
վրայ ու սնտուկին մէջ կենալուն հա-
մար է , ըսաւ լսող մը , որ ճանձ մ'ալ
չես հալածած , ինչ որ կ'ուզենք հաւ-
տացընել , մանաւանդ թէ հաւատալ՝
թէ ունինք , պէտք է գործածելով ցու-
ցընենք , չէ նէ կամ չունենալու , կամ
ազահութեան , կամ չարութեան , կամ
անհոգութեան նշան կուտանք . և յի-
րաւի այս պակսութիւններուն մէկը
պիտի ըլլայ մեր վրան : Հապա ուրեմն
ցուցընենք նախ մեր ձիրքերը՝ մեր ա-
ռաւելութիւնները , ու վերջը սկսինք

(թէ որ կը վայլէ) մեր քովինները դա-
տել : | ասն զի աս ալ մէկ պակսութիւն
մըն է մեր կարծեցեալ ազգասիրաց , որ
չեն կրնար հայու ազգը գովիլ կամ
պաշտպաննել՝ ինչուան որ կամ հոռոմը
կամ լոգրին և կամ հրեայն վար ըլլար-
նեն . “ | յսպէս կ'ընեն տղաք , կ'ըսէ
” լիիկարը , պատի վրայ ելելու ատեն՝
” ընկերնին իր պառկեցըննեն որ վրան
” ելլեն , : | նիրաւութեամբ և ան-
խելքութեամբ խառնած է այս հնաբքը .
վասն զի՝ նախ որ ուրիշի պակսութիւնը
մեզի առաւելութիւն մը չտար , և եր-
կրորդ՝ շատ անգամ , ըսեւմիշտ , սիալ
կը դատեն աս բանիս մէջ . զհայը գո-
վելու կամ պաշտպաննելու ատեն՝ հո-
ռոմմը , հրեայ մը , լոգրի մը , դիմա-
ցնին լու մը կ'երեւնայ . բայց որչափ
տարբեր պիտի երեային անոնք , թէ որ
իրենք ալ այն ազգերէն առաջ եկած
ըլլային . արդեօք որչափ այն ատեն հոռ-
մութիւնը բարձր պիտի երեւնար քան
զհայութիւնը : “ | ծնէ որ հասակդ շա-
” փել կ'ուզես , կ'ըսէ լիիկարը , կան-
” գունը վրադ գիր , քովինիդ վրայ մի
” գներ . իսկ թէ որ երկուքնուդ հա-
” սակն ալ կ'ուզես չափել երկուքին ալ
” մէկ կանգուն բանեցուր , :

Ծնէ որ հայու ազգը լաւ յատկու-
թիւններ ունի , ուրիշ ազգեր ալ ունին .
թէ որ անոնք պակսութիւններ ունին ,
հայն ալ ունի . վասն զի ազգ ըսածդ
պարտէզի մը կը նմանի , որ անկարելի
է թէ գէշ և անօգուտ խոտ ալ ըսուս-
ցընէ . բանը աս է թէ որ պարտէզ ա-
ւելի մոլախոտած կ'ըլլայ . — յայտնի է .
որն որ աւելի անհօդ անմշակ թողուած
ըլլայ . այնպիսւոյն թէ հողը լաւ ըլ-
լայ՝ բայց դարմանող ձեռք ըլլալուն հա-
մար՝ կրնայ բոլորովին անպիտան խոտե-
րով լեցուիլ , և օգտակար բոյսերն ծած-
կուիլ և խղզուիլ . շարունակեալ կրթու-
թիւնն է որ զազգերն աւելի կը ծաղ-
կեցընէ , քան թէ անխնամթողուած-
քնական ձիրք : | լնեցե՞ր ենք արդեօք
կամ ունինք մենք ալ աս շարունակեալ
կրթութիւնը . . . | լրեմն լութեամբ
և արդար ցաւով խոստովանինք թէ

մեր մէջալ շատ պակսութիւն կայ, շատ ետ մնացեր ենք : Ծնէ որ պակսութեան անունը մեզի պժգալի է, աւելի զզուելի ըլլայ անոր հետևանքը . ջանանք ճանչնալ ու խելա գէշխոտերն, ան ատեն առանց քարոզելու ալ՝ լաւ կ'երենանք :

Իրդար և ճշմարիտ ազգասիրաց թողլով աս բանս քննեն ու խորհրդածելը, դառնանք մէկ մ'ալ անոնց՝ որ առջիններուն պէս առանց իրաւանց զազգը բոլորովին վար կը զարնեն, կ'արհամարհեն, ոչնչացընել կ'ուզեն : Ի՞ բանիս ստոյդ պատճառ՝ իրենց ազգասեր ըլլան է . “ Ծնէ որ քիչ մը սէր ունենային՝ շատ մը աչք կ'ունենային,, կ'ըսէ լիիկար . զասնք պէտք է խրկել որ նախ ազգասիրութեան դաս մը լսեն, վերջը բերեն իրենց պատճառները : Ո՞եծամեծ տէրութեանց և ծաղկած ազգաց վրայ զմայլած՝ Հայոց ազգն ալ ազգ է կ'ըսեն . արևելեան խաժամուժներէն մէկն է : — Ի հարկէ աս ըտղն ալ Հայու ազգէն մէկն է . Ծնէ որ ինքը զարմանալի կերպով ազնիւ բարակ բուսեր է այն հաստ ազգէն, ցուցընէ մեզի իր առանձնաշնորհութիւնը . չէ՝ Ծնէ որ յանձն կ'առնու լսել Ծնէ ինքն ալ հաստ է, ազգն ալ հաստ է, պէտք է յանձն առնու հաստերուն մէջ ամենէն հաստ ինքն ըլլալուն պատիւն ալ, որ այսպէս վատութեամբ զինքն ալ իր ազգն ալ կ'ուզէ խայտառակել : Խակ Ծնէ որ ինքը կրթուած զիտութիւն սորված ըլլալուն համար՝ զազգը անարգելի տղիտութեան և անկրթութեան մէջ կը տեսնէ, զիտնայ որ մէկ կողմէն քիչ մը պակաս մնացեր է իր զիտութիւնն և կրթութիւնը, այսինքն ազգասիրութեան և մարդավարութեան կողմէն . վասն զի “ Խելացի և գիտուն մարդ՝ կը դատէ իր ազգն՝ բայց չդատապարտեր, անոր վէրքերը կը տեսնէ, գոցելու համար՝ չէ Ծնէ արևուն ցուցընելու համար . . . , կ'ըսէ լիիկար . զիտէ որ ամէն ծաղկած ու փառաւոր ազգեր որ կը տեսնէ ու կը զարմանայ, ատեն մը Հայու ազգէն խեղճեն եղեր, և մէջերնէն խելացիները չէ Ծնէ ազգեր.

նին ատելով, ուրանալով ու մէջէն ել լելով, հապա սիրելով, ջանալով ու ամէն կերպ զո՞չ ընելով՝ մարդ են ըրեր ու աս ատիճան փառաւորութեան հասուցեր են :

Ծնէ որ ազգը պակասաւոր ըլլալուն համար կ'անարգէ, պէտք է իրեն ուրիշ աշխարհէք մը փնտուէ, վասն զի աս աշխարհիս ամէն ազգերն ալ պակասաւոր են . իսկ Ծնէ որ իր ազգը շատ պակասաւոր է, պէտք է աւելի ցաւիլ ինչ պէս ծանր հիւանդի մը վրայ, չէ Ծնէ անարգել թողուլ երթալ . իսկ Ծնէ որ խիստ ընդհանուր կը տեսնէ այս պակասաւոր ինքն ալպլաչտրկուած պիտի ըլլայ, պէտք է որ ցաւակից ըլլայ հասարակաց, ինչպէս ուրիշներն ալ իրեն ցաւակից կ'ըլլան : Դզգին պակսութիւնները պէտք է ատել, բայց զազգը պէտք է սիրել, և այնչափ աւելի՝ որ չափ որ պակսութիւն տեսնենք . հիւանդներուն ալ այսպէս չենք լներ . որ չափ աւելի է ցաւը՝ այնչափ աւելի հոգ կ'ընենք, այնչափ աւելի սրտերնիս կը շարժի, վրանին կը գուրգուրանք, գեղ գեղի վրայ, բժիշկ բժշկի վրայ կը հացընենք, քովերնէն չենք զատուիր . այսպէս ալ մեր ազգին վրայ աչք տանք . և միիթարութեամք ալ տանք այս աչքը, վասն զի բնական հիւանդութիւնք շատ հեղ անբժշկելի կ'ըլլան, մեր ամէն ջանքը փուծ կը հանեն, բայց բարայականք՝ ինչպէս մեր ազգինը, ոչ երբեք անյուսափի են, որչափ ջանք ըլլայ՝ այնչափ աւելի և շուտ կը բժշկուի :

Ծնէ որ քաղաքական խօնարհ վիճակնուս համար է աս անարգ համարմունքը, պէտք է զիտնալ որ բաղդին անիւը մեր ձեռքը չէ, միայն Ծնէ ջանքով կրնանք քիչ մը շարժել . “ Պատարակինն ամենէն աղուոր քարը ամենէն բար, ձըր չէ, կ'ըսէ լիիկար, հասկա այն որ, իր տեղը լաւ յարմար կեցեր է . . . :

Ծնէ որ բնական անկարող անյաջող ազգ մը սեպուելուն համար է Հայոց անարգութիւնը, ասիկայ զօրաւոր պատճառ կ'ըլլար՝ միայն Ծնէ որ իրաւ ըլլար . վասն զի աս բանիս դէմ մեր վկայու-

թենէն աւելի ծշմարիտ և ազգու է ու տարաց վկայութիւնը՝ որ զհայոց ազգը շատ արևելեան ազգերէ վեր կը դնեն, մանաւանդ անոնցմէ որ մեզի պէս անտէր են. մեր ազգին պատմութիւնն և ինչուան հիմայ աս վիճակիս մէջ մնայն ալ կը ցուցընեն որ մտաւորուժ ունող ազգ մը եղած պիտի ըլլայ՝ որ այսափ գիմացեր է : (Ծէ որ հին ազնուականութիւն չունինք կ'ըսեն, բանան սրբազնն և արտաքին պատմութեանց առջի թղթերն, և կը տեսնեն որ մեր ազգին պէս փառաւոր ծագումն ոչ ոք ունեցեր է և կրնայ յաւիտեան ունենալ : Խակ թէ որ այն ծագման համեմատ՝ պայծառ յաջորդութիւն չենք ունեցած կ'ըսեն, ասոր մէջ ալ կը սխալն . յիշեն այն անաշառ և արդար ազգասէր խորենացին՝ որ զազգը յանդիմաննելուն ատենն ալ կը խոստովանի, “ Օ ի թէպէտ և եմք այժմու (կամ ածու) փոքր և թուով յոյժ ընդ փոքր սահմանեալ և զօրութեամբ տը կար . . . սակայն բազում գործք առ ըութեան գտանին գործեալ և ’ի մեր ըում աշխարհիս, և արժանի գրոց յիշատակի . . . յիշեն որ միայն աս ազգը ամէն հին ազգաց մէջէն՝ կրցեր է իրաւամբ առնուլ և անջինջ պաշէլ քառասունըորս երկայն դարերէ անցընելով հսկայի և քաջի նախանձելի անունները՝ ՀԱՅ և ԱՐՄԵՆԻԱ կոչուելով իրմէ և օտարներէն :

Ամբունայ ուրեմն և պոկունքը խածնէ այն ցուրտ բերանը՝ որ օդը պղծելով կը համարձակի ըսելու՝ թէ կը ցափմ հայ ծնած ըլլալուս . — այդ ցաւը չի իրեն՝ հապա իր ազգակցացը պէտք է ասանկ ազգակցից մը ունենալուն համար . բայց ես հաւանած եմ՝ թէ այն լուցողը խօսքին ուժը չհասկցած կը լուցե, չէ նէ՝ խենթերու թագաւոր պէտք է զնել զանիկայ : Վզգին պակառութիւնը չէ՝ անձին անշահութիւնն է որ զրուցել կուտայ այնպիսի խօսք . թէ որ լաւ մարդ է՝ իր ազգին մէջ աւելի պիտանի և փառաւոր կրնայ ըլլալ քան օտարաց մէջ, մանաւանդ ազգերնուս

հիմակուան վիճակին մէջ, որուն մթութեան մէջ ինքը աստղի մը պէս աւելի կրնայ փայլիլ, քան արևեի մը պէս ուրիշ լուսաւորեալ ազգաց ցորեկուան մէջ . չեն եղեր աս ետքի ատեններս ալ կամ թէ զկան ազգերնուս մէջ անանկ մարդիկ որ չէ թէ Վարի մէջ հապա Խւրոպայի ծաղկեալ ազգաց մէջն ալ գովութեամբ և փառօք կը յիշուին ու ազգին պարծանք մը կ'ըլլան . ով կ'արգիլ զայնպիսին որ ինքն ալ թէ որ այնչափ մեծ խելք ունի՝ անոնցմէ մէկը ըլլայ, կամ թէ վարպետ զրիչ ունի՝ մատենազրութեամբ անուն ու համբաւ ընէ իրեն ալ ազգին ալ : Խակ թէ որ ուրիշ ազգաց լուսովը ինքը ծածկել կ'ուզէ իր գէշութիւնը՝ աս ալ փուջ ջանք է . ” Արած Ճրագը, կ'ըսէ Խիկ, կար, կէս օրն ալ կէս զիշերն ալ, սեերես է . . . Ծէ որ անոնց փառքովը՝ ինքն ալ բան մը երենալ կ'ուզէ, իրաւցընէ կ'երենայ, իշամեզու մը : ” Խելացի մարդը, կ'ըսէ Խիկար, ըընայիր օրոցքին վրայ՝ ուսկից ընձայուեր է, հապա դէպ ՚ի գերեզման՝ օրն որ ինքն իր արդեամբքը պիտի պատրաստէ . . .

Վարդ թէ որ անիրաւ է այսպէս արհամարչել մեր ազգը, կամ անպատճառ մեծցընել, խելացի մարդուն կը վայլէ որ արդար աչքավնայի անոր վրայ և սիրէ . և այս սիրոյն համար ճանչնայ անոր կատարելութիւններն ալ պակսութիւններն ալ : Վռանց հարկի ըրանայ այն վելքերն՝ որ պէտք է բժշկել . հարկ որ ըլլայ՝ զգուշութեամբ դաշի, դողգըզուն ձեռքով, արտասուստ աչքով, տաք չնչով. արդարութիւնը միայն բանայ զայն, կարեկցութիւնը պատէ, խմաստութիւնը դարմանէ, սէրը անշետ ընէ սպիներն ալ :